

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ս.ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԹՕՐՕՆԹՕ

Սեպտեմբեր 1968 - Յունուար 1969

Նախ մեր սրտի խորերէն գոհութիւն եւ փառք կու տանք մեր Երկնաւոր Հօր որ այս տարի եւս մեզի պարգեւեց կարելիութիւնը վերաբանալու մեր Կիրակնօրեայ Վարժարանը ի փառս իր Սուրբ Անուան եւ ի մխիթարութիւն Թօրօնթօյի Հայ Եկեղեցւոյ:

Ա. ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

Կիրակնօրեայ Վարժարանիս յառաջադրութիւնը եղած է ու կը մնայ մեր նորահաս ու մատղաշ սերունդին կրօնա-բարոյական դաստիարակութիւնը: Այս կը նշանակէ մեր հայ մանուկներու եւ պատանիներու մտքին ու հոգիին առջեւ բանալ քրիստոնէական կեանքի լուսաւոր ուղին աստուածային պատգամներու փոխանցումովը նոյնիքն Լուսոյ Աղբիւր Աստուածաշունչի միջոցաւ: Այս կը նշանակէ նաեւ ծանօթացումը Հայ Եկեղեցւոյ, անոր սրբազան հաւատքին, գմայլելի շարականներուն, սուրբ աղօթքներուն, անոր պատմութեան, ծիսակատարութեան, տօներուն, աւանդութիւններուն եւ ի վերջոյ այս բոլորին ընդմէջէն անոր ոգիին, միշտ այն հաստատ ու աննահանջ համոզումով որ անկեղծ ու հարազատ ծանօթացումը այս պարագային պիտի առաջնորդէ մեր սիրասուն մանուկներն ու ապագային նայող պատանիները դէպի ամբողջական հասկացողութեան մը, գնահատանքի մը, սիրոյ մը՝ մեր սուրբ ու նուիրական Եկեղեցւոյ ու ժողովուրդին նկատմամբ:

Բ. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ՎԵՐԱԲԱՏՈՒՄ

1968 Օգոստոս ամսուան սկիզբները տեղւոյս հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Ժիրայր Վարդապետի հրաւերով ներկայ տարեշրջանի համար Կիրակնօրեայ Վարժարանիս տեսչութիւնը յանձն առաւ Պր. Սարգիս Համպոյեան, փոխարինելով վաստակաւոր եւ նուիրեալ ուսուցչուհի Տիկ. Աղաւնի Գարակէօզեանը որ իրեն այնքան սիրելի Կիրակնօրեայ Վարժարանի գործէն ակամայ կը հրաժարէր առողջապահական նկատումներով:

Նոյն ամսուան մէջ տեղի ունեցան նորակազմ ուսուցչական կազմի քանի մը նախապատրաստական հանդիպումները միշտ հոգ. հովիւին նախագահութեամբ որոնց ընթացքին արծարծուեցան Կիրակնօրեայ Վարժարանիս հետ անմիջական աղերս ունեցող հարցեր եւ առնուեցան համապատասխան որոշումներ: Շուտով խմբագրուեցաւ 30 Օգոստոս 1968 թուակիր շրջաբերական-նամակը հայերէն եւ Անգլերէն լեզուներով ուղղուած մեր թանկագին ծնողներուն եւ որմէ մէկական օրինակներ ուղարկուեցան գաղութիս բոլոր հայ ընտանիքներուն անխտիր: Ապա Սեպտեմբեր 8 եւ 15, 1968 Կիրակի առաւօտներուն Ս. Պատարագէն անմիջապէս ետք տեղի ունեցան Վարժարանիս արձանագրութիւնները եկեղեցւոյս հանդիսասրահին մէջ: Ի վերջոյ Կիրակի 6 Հոկտեմբեր 1968, առաւօտեան ժամը 11:30ին տեղի ունեցաւ պաշտօնական վերաբացումը Կիրակնօրեայ Վարժարանիս նախագահութեամբ հոգեւոր հովիւին եւ ներկայութեամբ բազմաթիւ ծնողներու եւ ուսանող - ուսանողուհիներու:

Գ. ԴԻՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Ներկայ տարեշրջանի համար Կիրակնօրեայ Վարժարանս ունի ընտիր ուսուցչական կազմ մը որուն մէն մի անդամը իր անսակարկ նուիրումին կը միացնէ քրիստոնէական մաքուր հաւատք ու օրինակելի նկարագիր:

Մեր ուսուցչական կազմը կը բաղկանայ հետեւեալ ուսուցիչ-ուսուցչուհիներէ. -

1. Տիկ. Էն Գրիգորեան - Մանկապարտէզ - (4-5 տարեկան)
2. ,, Լիւսի Համպոյեան ,, ,,
3. ,, Սիւզան Չուլճեան Ա. Դասարան (6 տարեկան)
4. Օր. Ալիս Մայիսեան Բ-Գ ,, ,, (7-8 ,,)
5. ,, Անահիտ Մայիսեան Դ. ,, ,, (9 ,,)
6. Պր. Յակոբ Պէրպէրեան Ե. ,, ,, (10 ,,)
7. ,, Տիգրան Դազարեան Զ. ,, ,, (11 ,,)
8. ,, Մուրատ Պահուտեան Է. ,, ,, (12 ,,)
9. ,, Սարգիս Համպոյեան Ը-Թ ,, ,, (13-14 ,,)
10. Օր. Շուշանիկ Պոյաճեան - Քարտուղար-Գանձապահուհի

Դ. ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Կիրակնօրեայ վարժարանիս ուսանողութեան թիւը դժբախտաբար կայուն վիճակ մը չի պարզեր տրուած ըլլալով որ ընդհանրապէս մեր աշակերտներուն կիրակնօրեայ վարժարան կանոնաւոր ու առանց բացակայութեան յաճախելը անմիջականօրէն կապուած է ծնողներու եկեղեցւոյ Ս. Պատարագին ներկայ գտնուելու կարելիութենէն կամ տրամադրութենէն:

Բարձրագոյն թիւը ցարդ ներկայ գտնուողներու եղած է 55 իսկ նուազագոյնը՝ 25: Միջին հաշուով իւրաքանչիւր կիրակի ունեցած ենք 42 աշակերտ-աշակերտուհի: Այստեղ անցողակի կ'արժէ յիշել որ մեր կիրակնօրեայ վարժարանին մէջ ունինք նաեւ ոչ-հայ 8 տարեկան տեղացի աղջնակ մը որ մեզի հետ համոյքով աղօթք կ'արտաւանէ, շարական կ'երգէ, ու սիրով կը հետեւի իր դասարանի դասերուն:

Ե. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՅԱՅՏԱԳԻՐ ԵՒ ՈՒՍՄԱՆ ԵՐԱԳԻՐ

Կիրակնօրեայ վարժարանիս կիրակնօրեայ յայտագիրը կ'ընթանայ այսպէս. - 10:30 - Աշակերտ-աշակերտուհիներ կը սկսին ժամանել եւ ուսուցիչներու հսկողութեան ներքեւ կը պարապին համելի եւ օգտակար խաղերով:

11:00 - Զանգը կը հնչէ եւ աշակերտութիւնը կը մէկտեղուի սրահին մէջ: Միասնաբար կ'երգուի Տէրունական Աղօթքը, կ'արտասանուի մաղթանք մը եւ ապա աղօթք մը: Կ'ուսուցուի կամ կ'երգուի շարական մը կամ երգ մը: Սուրբ Այտլած'ի երգեցողութենէն ետք ներկաներ կ'ունկնդրեն Ս. Գիրքէն հատուածի մը ընթերցումը, որուն կը հետեւի անմիջապէս Հաւատոյ Հանգանակի արտասանութիւնը: Ապա հերթով ուսուցիչ մը կ'արտայայտուի օրուան Ս. Գիրքի բովանդակութեան մասին կամ կը պատմէ բարոյալից պատմութիւն մը:

11:30 - Աշակերտ-աշակերտուհիներ կը բաժնուին դասարաններու ուր շուտով կը ստուգուի անոնց ներկայութիւնը, կը հաւաքուին նուէրները, եւ ի վերջոյ տեղի կ'ունենայ բուն դասաւանդութիւնը:

12:00 - Վերջ դասաւանդութեանց: Աշակերտութիւնը կրկին կը մէկտեղուի սրահին մէջ, կ'արտասանուի փակման աղօթք մը եւ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ մաղթերգով վերջ կը գտնէ օրուան յայտագիրը:

Մեր ուսման ծրագիրը իր լայն գիծերուն մէջ կը հետեւի Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի պատրաստած ուսման ծրագրին:

Մանկապարտէզի (4-5 տարեկան) մէջ մանուկներ կը զբաղին ձեռային աշխատանքով, ու խաղերու համելի մթնոլորտի մը մէջ անոնց կը տրուի Աստուծոյ հայրութեան գաղափարը ու կը խօսուի մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի մասին:

Ա. Դասարանի (6 տարեկան) մէջ կը պատմուին մանուկներու հասկացողութեան մատչելի Ս. Գրային պատմութիւններ:

Բ-Գ Դասարանի (7-8 տարեկան) մէջ կը դասաւանդուի Հին Ուխտի պատմութիւն:

Դ. Դասարանի (9 տարեկան) մէջ կ'ուսուցուի նոր Ուխտի պատմութիւն:

Ե. Դասարանի (10 տարեկան) մէջ կը ներկայացուին Հայ Եկեղեցւոյ Պատմութեան մեծագոյն դէմքերուն կեանքերը:

Ձ. Դասարանի (11 տարեկան) մէջ կը բացատրուի հայ եկեղեցւոյ դաւանա-
բանութիւնը իր պարզագոյն ձեւին մէջ եւ հիմնական գիծերով:

է. Դասարանի (12 տարեկան) մէջ աշակերտ-աշակերտուհիներ կը սերտեն
հայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին պատմութիւնը:

Ը-Թ Դասարանի (13-14 տարեկան) մէջ աւելի հանգամանօրէն կը բացատ-
րուին հայ եկեղեցւոյ հիմնական հաւատալիքները:

Վարժարանէս ներս հասկնալի պատճառներով ոչ միայն հայերէն այլեւ
Անգլիերէն լեզուն կ'օգտագործուի որպէս հաղորդակցութեան միջոց ուսուցիչ-
ներու եւ աշակերտներու միջեւ:

Ձ. նիւթԱԿԱՆ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ

Մեր եկամուտի աղբիւրները եղած են հետեւեալները.-

-Մուտքի արձանագրութեանց առիթով սրտաբուխ նուէրներ ծնողներէ,

-ծխական Խորհուրդ,

-Աշակերտ-աշակերտուհիներու կիրակնօրեայ նուէրները:

Ունեցած ենք ընդամէնը 271.49 տուարի եկամուտ մը Սեպտեմբեր 1968էն
մինչեւ Յունուար 20, 1969:

Մեր ծախսերը եղած են գլխաւորաբար Կիրակնօրեայ վարժարանի յատուկ
առարկաներու, գրքերու, Ամանորի հանդէսի նիւթերու եւ նուէրներու գնում եւլին:
Ունեցած ենք ընդամէնը 110.51 տուարի ելք մը մինչեւ այսօր:

Այժմ որպէս պատրաստ գումար ունինք 160.98 տուար:

է. ԵԶՐԱՓՈՒՄ

Խորապէս համոզուած ենք ու կը հաւատանք որ Կիրակնօրեայ վարժարանս
Թօրօնթօյի Ս. Երրորդութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ամենէն կարեւոր հի-
մերէն մին է: Որովհետեւ Եկեղեցին բաղկացնող հաւատացեալ ու գիտակից տար-
րերը ապագային գլխաւորաբար Կիրակնօրեայ վարժարանիս ներկայ մանուկներն
ու պատանիներն են որ պիտի ըլլան: Այլ խօսքով, եթէ իսկապէս կը մտածենք
այս եկեղեցւոյ ապագայ կեանքին ու կենսունակութեան մասին, եթէ կ'ուզենք
ունենալ այս եկեղեցիին կապուած ու այս եկեղեցին կառավարող խորապէս հաւա-
տացեալ անդամներ որոնք կը հաւատան հայ եկեղեցւոյ առաքինութեան ու առաքե-
լութեան, հայ ժողովուրդի յաւերժութեան, ապա ուրեմն այս Կիրակնօրեայ վարժա-
րանը զօրացնելու է ամէն կերպով անոր տալով անհրաժեշտ ամէն օժանդակութիւն
ու դիւրութիւն, գործնապէս գործակցելով անոր հետ, որովհետեւ վերջին հաշուով
նոյն այս Կիրակնօրեայ վարժարանն է որ ունի անհրաժեշտ միջոցներն ու նկարա-
գիրը այդ սրբազան գործը կատարելու:

Մեր լաւագոյնը ընելով հանդերձ դժբախտաբար մեր հակակշռէն դուրս
գտնուող կարգ մը ազդակներ երբեմն մեր գործը կը դժուարացնեն: Ունինք դժուա-
րութիւններ, հետեւաբար մտահոգութիւններ որոնցմէ քանի մը հատը գէթ կը փափա-
քէինք ինչպէս յիշեմ.-

1) Մեր սրահի ֆիզիքական միջավայրը ինչպէս հետու է զոհացուցիչ կամ
միջիթարական ըլլալէ, շատ հետու է մեր երազած մթնոլորտը ըլլալէ: Չունինք
կարելիութիւններ եւ արտօնութիւն այս սրահին տալու քիչ մը կրօնական նկարա-
գիր ինչ որ կը կարծենք անհրաժեշտ է:

2) Չունինք անանձին դասասենեակներ: Մեր դասարանները կը ցրուին ինչ
այս սրահին այլեւայլ անկիւնները: Կարելի է երեւակայել անշուշտ այն անպա-
տհութիւնները որոնք յառաջ կու գան այս կացութենէն. -աշակերտներու ուշադ-
րութեան ցրուում, գիրար խանգարող ու չէզոքացնող ձայներ եւն.: Ինչ լաւ պիտի
ըլլար եթէ առժամեայ արագ բաժանումներ ընելու միջոցներն ու կարելիութիւնը
գտնէինք այս սրահին մէջ շարժական վարագոյրներով:

3) Դժբախտաբար տակաւին քիչ չէ թիւը անոնց որոնք Կիրակնօրեայ Դպրոցի պահուէն դուրսը մեծ աղմուկ կը յառաջացնեն, կամ սրահ կը մտնեն, սիկարէթով ու աղմուկով: Մենք շատ սիրով կը փափաքինք ունենալ հիւրեր որոնք Կիրակնօրեայ վարժարան մեզի հետ ըլլան, միասին աղօթք արտասանեն ու երգեն ու նոյնիսկ տան իրենց տպաւորութիւնները, թելադրութիւններն ու քննադատութիւնները: Բայց բոլորովին անհաճելի կը գտնենք երբ ոմանք դոնորը անձոնի կերպով կը բանան, ներս կը դիտեն մերթ քարձրածայն խնդուքով ու խօսակցութեամբ ու նոյնքան անձոնիութեամբ դուրս կ'ելլեն:

4) Ինչպէս վերիւ ըսուեցաւ մեր ուսանողութեան թիւը միջին հաշուով 42 է: Սակայն արդեօք կարելի չէ՞ բարձրացնել այս միջինը: Մենք ի վիճակի ենք աւելի մեծ թիւով աշակերտ-աշակերտուհիներ ընդունիլ մեր վարժարանէն ներս: Ժիշդ է որ չունինք ինքնաշարժի սպասարկութիւն: Մեր նիւթական միջոցները չեն թոյլատրեր այդպիսի նախաձեռնութիւն մը: Բայց աւելի լաւ պիտի չըլլար որ ծնողներ իրենք աւելի մեծ թիւով ու կանոնաւորութեամբ ամէն Կիրակի եկեղեցւոյ Ս. Պատարագին ներկայ գտնուէին միասնաբար բերելով իրենց թանկագին ու սիրասուն գաւակները Կիրակնօրեայ վարժարանի համար: Այսպէսով իրենք պիտի ունենան հոգեւոր մխիթարութիւն, մինչ իրենց գաւակները՝ հոգեւոր դաստիարակութիւն: :

Մեր անկեղծ փափաքը այն է որ եկեղեցւոյս պատկառելի ծխական ընդհանուր ժողովը լրջօրէն նկատի կ'ունենայ մեր այս հարցերը եւ կը կատարէ անհրաժեշտ թելադրութիւնները ու կու տայ շինիչ ուղղութիւններ առ որ անկ է:

Փակելէ առաջ կ'ուզէինք մեր երախտագիտութիւնը հրապարակաւ յայտնած ըլլալ Գանատայի հայոց Առաջնորդական փոխանորդ Գերշ. Տ. Վաչէ Ս. Հօր որ անձնական այցելութեամբ վարժարանս մեծապէս խանդավարեց ու քաջալերեց մեզ, ինչպէս նաեւ գաղութիս ժրջան հոգեւոր հովիւին՝ Հոգշ. Տ. Թիրայր վարդապետ Թաշմեանին, որ իրեն տրամադրութեան ներքեւ գտնուող կարելի միջոցներով թել ու թիկունք է կանգնած Կիրակնօրեայ վարժարանիս, ամբողջական նուիրումով ու զոհաբերութեամբ: Ծնորհակալութեան մեր սրտագին խօսքը կ'երթայ նաեւ պատուարժան ծխական խորհուրդին ու յատկապէս անոր յարգելի Ատենապետ Պր. Հայկ Սէլեանին եւ անոնց որոնք զօրավիգ կը կանգնին մեզի ու սրտովին կը հաւատան Կիրակնօրեայ այս գործի կարեւորութեան ու նուիրականութեան:

Պատկառելի ծխական ընդհանուր ժողովին յաջողութեան լաւագոյն մաղթանքներով՝

Սարգիս Համպոյեան
Տեսուչ

Ս.Նրրորդութիւն Հայց.եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանին

Թօրօնթօ
20 Յունուար, 1969